



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հունիսի 2017 թվականի N 19-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու թիվ 6 նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N 47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԾԱ

2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հունիսի 2017 թվականի N 20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 47-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման հավելվածի երկրորդ գլխի 2.7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.7 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի զարգացման առկա դժվարությունները հետևյալն են.

1. Համայնքում կոյուղու ցանցի բացակայությունը,
2. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը,
3. Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստող, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացումը, հանգստի գոտիների ստեղծումը:
4. Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների

ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը:

Վերը նշված՝ զարգացման ծրագրերի իրականացման հիմնական խոչընդոտ է հանդիսանում համայնքի ֆոնդային բյուջեի միջոցների սահմանափակ լինելը, ներքին և արտաքին դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը: Համայնքի ֆոնդային մասի ֆինանսական միջոցները գոյանում են հիմնականում հողերի նպատակային նշանակության փոփոխություններից համայնքի բյուջե մուտքագրվող կադաստրային արժեքի տարբերության գումարից, երբեմն աճուրդով հողամասերի վաճառքից բյուջե մուտքագրվող հողի արժեքից և վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներից: Սակայն համայնքի առջև ծառայած հիմնախնդիրների լուծումը գրեթե ամբողջությամբ պահանջում են կապիտալ ներդրումներ:

Համայնքի կարևորագույն հիմնախնդիրներից է հանդիսանում նաև աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպումը, քանի որ համայնքը չունի աղբավայր և այդ իսկ պատճառով նախատեսվում է աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացումը պայմանագրային հիմունքներով:»:

2) որոշման հավելվածի երկրորդ գլխի 2.8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.8 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ (ՈւԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

1. Երևան քաղաքին մոտ լինելը, երիտասարդության՝ կրթական համակարգերից օգտվելու հնարավորությունը,
2. Համայնքում բարձրագույն և միջնակարգ կրթությամբ աշխատուժի առկայությունը,
3. Համայնքի գազաֆիկացումը (բացառությամբ համայնքի վարչական տարածքում գտնվող այգետնակների),
4. Համայնքի գերծ լինելը արտադրական թափոններից և մթնոլորտի աղտոտվածությունից,
5. Համայնքի բարենպաստ կլիմայական պայմանները,
6. Երևան և Աբովյան քաղաքների հետ կապի առկայությունը (համայնքը մոտ է գտնվում մայրաքաղաքին՝ մոտ 15 կմ., իսկ Աբովյան քաղաքին՝ մոտ 4 կմ.), որը նպաստում է շուկաներում գյուղատնտեսական մթերքների սպառմանը,

7. Համայնքի տարածքով անցնող խմելու ջրի ջրագծերի առկայությունը (Արզնի-Երևան և Արզական-Երևան),
8. Ոռոգման ներհամայնքային համակարգի առկայությունը,
9. Համայնքի տարածքով հոսող Հրազդան գետի առկայությունը, որը նպաստավոր է հանգստյան գոտիների ստեղծման և ձկնաբուծության զարգացման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

1. Գործազրկության առկայությունը և արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճը,
2. Աշխատատեղերի պակասը,
3. Ազգաբնակչության անվճարունակությունը, սոցիալ-տնտեսական պայմանների ոչ բարձր մակարդակը.
4. Ներհամայնքային ճանապարհների ոչ բարեկարգ վիճակը,
5. Ձմռան ամիսների ցրտաշունչ եղանակը, որը ազդում է համայնքի բնակիչների եկամուտների վրա (գազի և էլեկտրաէներգիայի մեծ ծախս),
6. Հողերի անջրդիության պատճառով համայնքի բնակիչների եկամուտների նվազումը,
7. Ձնհալի ժամանակ Հրազդան գետի վարարումների վտանգի առկայությունը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ